



- ✠ Ինչպէ՛ս որ Աստուած մեզի կ'օգնէ, մենք ալ պատրաստ ըլլանք՝ ուրիշներուն օգնելու:
- ✠ Ներուրթիւններ ու ցաւեր միշտ պիտի ունենանք, սակայն Աստուած խոստացած է մեզի հետ ըլլալ՝ ամէն պարագաներու մէջ:
- ✠ Թէեւ մեր այս աշխարհի վրայ ունեցած կեանքերը լեցուն են ցաւերով ու վիշտերով, սակայն՝ Տէրոջը ներկայութեան մէջ յաւիտեան ուրախ պիտի ըլլանք:
- ✠ Յարատեւ աղօթքի մէջ ըլլալը՝ մեզ կը զօրացնէ ու մեր կեցուածքը կը փոխէ:
- ✠ "As God helps us, let us be ready to help others."
- ✠ We will always have troubles and pains, but God has promised to be with us in all circumstances.
- ✠ Although our lives on this earth are full of pain and sorrow, we will be forever happy in the presence of the Lord.
- ✠ Being in constant prayer strengthens us and changes our attitude.



2021 FEASTS

- November 20 Feast of All Saints
- December 4 Saint Thaddeus and Saint Bartholomew
- December 18 Saint Hagop (James) of Nisibis
- December 23 Saints David the Prophet & Holy Apostle James
- December 25 Saint Stephen the Protomartyr
- December 27 Saints Peter and Saint Paul
- December 28 The Holy Apostle James & John the Evangelist




Announcement: On Sunday, November 14, 2021, H.E. Archbishop Anoushavan Tanielian will ordain acolytes Antranig & Paul Tatarian.



Ս. ԽԱՉ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ SOORP KHATCH ARMENIAN APOSTOLIC CHURCH

☞ SUNDAY, NOVEMBER 14, 2021 ☞



ՉԱՅՆ ԱՉ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՅԻՍՆԱԿԻ ՊԱՀՈՑ
PAREGENTAN OF ADVENT
NINTH SUNDAY AFTER THE EXALTATION

«ՀԱՍՍԱՍԵՂ ՀԱՅ ԳՊՐՈՑ»Ի
ՅԱՏՈՒԿ ԺԱՍԵՐԳՈՒԹԻԻՆ 9:30-ԻՆ

SPECIAL SERVICE FOR
HAMASDEGH ARMENIAN SCHOOL, 9:30 a.m.
Ս. Պատարագ Առ. Ժամը 10:30-ին հեռարձակում
Divine Liturgy 10:30 a.m. Live Streamed

Soorp Khatch Armenian Apostolic Church
4906 Flint Drive, Bethesda, MD 20816
Office Hours: 10:00 a.m.-2:00 p.m.
Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393
E-mail: soorpkhatch@verizon.net
Web Page: www.soorpkhatch.org
Rev. Fr. Sarkis Aktavoukian, Pastor
Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

All Sick



Parishioners

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ**

----- (1 . 1 - 11) -----

Պօղոս եւ Տիմոթէոս, Քրիստոս Յիսուսի ծառաներս, կը գրենք ձեզի՝ Քրիստոս Յիսուսի միացած բոլոր հաւատացեալներուդ, որ Փիլիպպէի կողմերը կը բնակիք, ինչպէս նաեւ եպիսկոպոսներուն ու սարկաւազներուն: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Քրիստոս Յիսուս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Ամէն անգամ որ ձեզ յիշեմ՝ գոհութիւն կը յայտնեմ իմ Աստուծոյ: Ամէն անգամ որ ձեր բոլորին համար կ'աղօթեմ՝ ուրախութեամբ կ'աղօթեմ, որովհետեւ առաջին օրէն մինչեւ հիմա ձեր մասնակցութիւնը բերիք աւետարանչութեան գործին: Եւ վստահ եմ՝ թէ Աստուած, որ այդ բարի գործը սկսաւ ձեր մէջ, զայն իր կատարումին պիտի հասցնէ մինչեւ Քրիստոս Յիսուսի օրը գայ: Իրաւունք կը համարեմ այսպէս խորհիլ ձեր բոլորին մասին, եւ ձեզ սրտիս մէջ ունիմ, որովհետեւ բոլորդ ալ մասնակից եղաք ինծի վիճակուած շնորհքին, ըլլա՛յ բանտարկութեան ընթացքին, ըլլա՛յ երբ ազատ վիճակով Աւետարանը կը պաշտպանէի ու կը հաստատէի: Միայն Աստուած գիտէ՝ թէ որքա՛ն կարօտցած եմ ձեզ, Քրիստոս Յիսուսի գորովով:

Իմ աղօթքս է, որ ձեր սէրը աւելի եւ աւելի աճի աստուածգիտութեամբ եւ կատարեալ դատողութեամբ, որպէսզի կարենաք լաւը ընտրել եւ Քրիստոս իր գալստեան օրը ձեզ գտնէ մաքուր եւ անբասիր, եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ արդար գործերով հարստացած՝ պատճառ ըլլաք որ Աստուած փառաւորուի եւ գովուի:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՆՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (9 . 44 – 50)**

Մինչ ժողովուրդը կը զարմանար իր կատարած գործերուն վրայ, Յիսուս աշակերտներուն դառնալով ըսաւ.

- Լա՛ւ մտիկ ըրէք եւ մի՛ մոռնաք ասիկա. Մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը:

Սակայն աշակերտները չհասկցան խօսքին իմաստը, որովհետեւ Աստուած իրենցմէ ծածկած էր՝ որպէսզի չհասկնան: Միւս կողմէ ալ՝ կը վախնային իրեն հարցնելու այս մասին:

Աշակերտները սկսան վիճաբանիլ թէ իրենցմէ ո՞վ է մեծը: Յիսուս գիտնալով անոնց մտածումը, մանուկ մը առաւ եւ իր քով կանգնեցնելով՝ ըսաւ.

- Ով որ ընդունի այս մանուկը իմ անունովս՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս կ'ընդունի, ընդունած կ'ըլլայ զիս զրկողը: Որովհետեւ ով որ ձեր բոլորին մէջ փոքրիկն է, ան է մեծը:

Յովհաննէս ըսաւ.

- Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ չար ոգիներ կը հանէր եւ մենք արգիլեցինք իրեն, որովհետեւ մեզի հետ չի շրջի: Յիսուս ըսաւ.

- Արգելք մի՛ ըլլաք իրեն. որովհետեւ ան որ հակառակ չէ ձեզի, կը նշանակէ թէ ձեր կողմն է:

 **SCRIPTURES READINGS** 
PHILIPPIANS 1:1-11

Paul and Timothy, servants of Christ Jesus,
To all God's holy people in Christ Jesus at Philippi, together with the overseers and deacons:

Grace and peace to you from God our Father and the Lord Jesus Christ.

I thank my God every time I remember you, constantly praying with joy in every one of my prayers for all of you, because of your sharing in the gospel from the first day until now. I am confident of this, that the one who began a good work among you will bring it to completion by the day of Jesus Christ. It is right for me to think this way about all of you, because you hold me in your heart, for all of you share in God's grace with me, both in my imprisonment and in the defense and confirmation of the gospel. For God is my witness, how I long for all of you with the compassion of Christ Jesus.

And this is my prayer, that your love may overflow more and more with knowledge and full insight to help you to determine what is best, so that in the day of Christ you may be pure and blameless, having produced the harvest of righteousness that comes through Jesus Christ for the glory and praise of God.

LUKE 9:44-50

While everyone was marveling at all that Jesus did, he said to his disciples, "Listen carefully to what I am about to tell you: The Son of Man is going to be betrayed into the hands of men." But they did not understand what this meant. It was hidden from them, so that they did not grasp it, and they were afraid to ask him about it.

An argument started among the disciples as to which of them would be the greatest. Jesus, knowing their thoughts, took a little child and had him stand beside him. Then he said to them, "Whoever welcomes this little child in my name welcomes me; and whoever welcomes me welcomes the one who sent me. For he who is least among you all—he is the greatest."

"Master," said John, "we saw a man driving out demons in your name and we tried to stop him, because he is not one of us."

"Do not stop him," Jesus said, "for whoever is not against you is for you."

ARCHPRIEST FATHER DICKRAN KHOYAN
ARCHPRIEST FATHER SEMPAD DER MEKHSIAN
ARCHPRIEST FATHER SAHAG VERTANESSIAN
ARCHPRIEST FATHER KEGHART BABOGLIAN
DEACONS, CHOIR MEMBERS, BENEFACTORS, GODFATHERS,
AND ALL DECEASED MEMBERS OF THE NATIONAL
REPRESENTATIVE ASSEMBLY, BOARD OF TRUSTEES, LADIES
GUILD, HAMASDEGH SCHOOL PRINCIPALS AND TEACHERS

Requested by: Der Hayr, Board of Trustees and Ladies Guild of
Soorp Khatch

LADIES GUILD DECEASED MEMBERS:

ANGELINE ABRAHAMIAN
HARRY ATANOSSIAN
ROSE BABOYIAN
CAROLINE BESIRYAN
DIKRANOUHI CHAKARIAN
MARGARET DARDARIAN
MARGARET KRİKORIAN DARDARIAN
AZNIV DERZOOKIAN
VIRGINIA GARABEDIAN
JULIA HAMASIAN
ROSE HAMASIAN
MATILDA HARATUNIAN
KOHAR HAROUTUNIAN
SEDA KAVALDJIAN KACHIGIAN
VARTANOUSH KARIBIAN
JAMES KESHISHIAN
YN. SIRARPI KHOYAN
SOSSIE KAVALDJIAN KOCHAKIAN
ARDEMIS KOCHARIAN
AROOSIAG MARDIROSSIAN
YN. HRIPSIMEH DER MEKHSIAN
DORIS MINASSIAN
AGHAVNI MIRANIAN
ALICE MUKITARIAN
OSKI ORNADZIAN
TAKOUHI PALIAN
ZABELLE PAUL
OPHELIA PETROSSIAN
AMY ROOMIAN
SERPOOHI SERENGULIAN

MARY SHAMIGIAN
SIRAN SINANIAN
KHONAR TAVITIAN
MARY TIKOYAN
PERNIGE TIKOYAN
ANNA TOMASKESIS
FLORA VARTANIAN
SEROUN WANG
YR. ARMENOUHI VERTANESSIAN

Requested by: Der Hayr and Board of Trustees
Ladies Guild of Soorp Khatch

HAGOP YEZEJIAN
BAITZAR VORPERIAN
VAROUJAN YAZEJIAN

(1st Anniversary)

Requested by: Der Hayr and Board of Trustees
Krikor Yazejian and Family
Anahid Yazejian and Family

SARKIS NAZARIAN
SAKO NAZARIAN
KIRK (KRİKOR) NAZARIAN
HAGOP AND AZNIV MANKOUSHIAN
KEVORK MANKOUSHIAN
ARAXIE HEKIMIAN

(12th Anniversary)

(16th Anniversary)


(17th Anniversary)

(9th Anniversary)

Requested by: Der Hayr and Board of Trustees
Hermine and Tamar Nazarian
Kiledjian Family
Hasmik Mankoushian



2020 & 2021 Membership Dues – Parishioners who have not paid their 2020 Annual Membership dues are encouraged to remit payment. 2021 Membership Dues are also acceptable now. The membership fees are \$150.00 per adult and \$50.00 for each full time student, ages 18-26. These dues are 100 percent tax deductible.



ՈՒՇԱԴՐ ՈՒԹԻՆ

Սիրելի՛ հարազատներ,

Վստահ եմ, որ դուք ալ ինձի չափ ոգևորուած էք և քաջալերուած՝ սպասողական 19 անորոշ ամիսներէ ետք մեր եկեղեցւոյ և համայնքի բնական կեանքին վերադարձով: Այդ ընթացքին, մեր եկեղեցական արարողութիւններն ու պատարագները ընթացան անխափան՝ բայց մեր ժողովուրդի գրեթէ մեծամասնութեան բացակայութեամբ:

Այսօր, մեծ մասամբ վերականգնուած է ամէն ինչ եւ Սուրբ Խաչն ու Համաստեղ Դպրոցը աշխուժացած են մեր հաւատացեալներու ներկայութեամբ եւ մեր սիրասուն զաւակներուն ուրախ վազվոտութեամբ ... Եւ մանաւանդ, որ ձեր աջակցութեամբ ունեցանք ակնկալուածէն աւելի յաջող տօնավաճառ մը, պազար մը:

Մեր յառաջիկայ աւանդական կարեւորագոյն ձեռնարկը՝ եկեղեցւոյս 57-ամեակի նշումն է, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 13 նոյեմբերին: Այս տարուան տօնակատարութիւնը առանձնաշատուկ է եւ անկիւնադարձային նշանակութիւն ունի մեր եկեղեցւոյ ապագայ ծրագրի իրականացման համար:

Ինչպէս տեղեակ էք, մենք զգալի յառաջընթաց արձանագրած ենք 9490 River Road-ի մեր նոր տան նախագիծի առընչութեամբ: Իսկ գրասենեկային աշխատանքները տակաւին կը շարունակուին:

Ուրախալի լուրը այն է, որ Շաբաթ, 13 նոյեմբերին, ժամը 16:00-ին, Թեմիս բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Անուշաւան Արք. Դանիելեան պիտի կատարէ ՄԵՐ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ հողի օրհնութիւնն ու հիմնարկէքը: Իսկ յաջորդ օրը՝ Կիրակի, 14 նոյեմբերին ի՛նք պիտի մատուցանէ պատարագը:

Վստահ ենք, որ բոլորդ ալ պիտի փափաքիք ներկայ գտնուիլ, աւելի քան երեսուն տարի սպասուած այս հոգեպարար արարողութեան, որուն պիտի յաջորդէ հիւրասիրութիւն մը եւ ապա 57-րդ տարեդարձի տօնակատարութիւնը, որ տեղի պիտի ունենայ Sts. Peter and Paul Անտիոքեան Ուղղափառ եկեղեցւոյ սրահին մէջ, 10620 River Rd., Potomac, MD:

Յուսով ենք, որ բոլորդ ալ մաս կը կազմէք պատմական այս արժանայիշատակ միջոցառմանը: Կը Խնդրենք, որ հրաւերները ստանալէ անմիջապէս ետք, ապահովէք ձեր տեղերը՝ հեռաձայն-ներով եկեղեցւոյ գրասենեակ (301) 229- 8742:

Անհամբեր ենք ձեր ներկայութիւնը վայելելու:
Չնորհակալութիւն նաեւ ձեր վստահութեան ու շարունակական աջակցութեան համար:

Dear Parishioners,

I'm very excited and encouraged to see that after a very tough 19 months you are returning to our church and community functions. Our church services have resumed to in-person worship, Hamasdegh Armenian school is in full session, and we just completed a very successful bazaar.

Our next major upcoming event is the celebration of our church's 57th Anniversary on November 13, 2021. This year's celebration will be extra special! As you are aware we have made significant progress with our development project for our new home on 9490 River Rd. His Eminence Archbishop Anoushavan Tanielian will preside over the blessing of the ground ceremony at River Rd at 4:00pm, and the next day on Sunday November 14 he will celebrate the badarak.

We encourage all community members to attend this service and join us for a property walk through followed by our Anniversary celebration, which will be held at Sts. Peter and Paul Antiochian Orthodox Christian Church Hall at 10620 River Rd., Potomac, MD.

We hope to see you all join the Board of Trustees and Der Hayr at this monumental event. Please keep an eye out for our official invitation coming to you soon or call the church office (301) 229 – 8742, to reserve your seats in advance.

Thank you for your continued support!